ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի ղեկավար ***ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ***

- **ՔԱՂԱՔ /ԵՐԿԻՐ/ԺԱՄԿԵՏ**

- ***Լիոն, Ռոման, Մարսել (Ֆրանսիա) և Ժնև (Շվեյցարիա), հուլիսի 3-7-ը 2017 թ.***

- **ՆՊԱՏԱԿԸ**

  - *Մասնակցություն Ռոմանի կոնսերվատորիայի և Ֆրանսիա-Աշտարակ-Հայաստան ընկերության կողմից անցկացվող ամփոփիչ հայ-ֆրանսիական մանկական նվագախմբի ամառային ստուգատես-համերգներին:*
  - *Հանդիպում Օվերն Ռոն Ալպ մարզի նախագահ Լորան Վոկեյի, Լիոնի և Ռոմանի քաղաքապետարանների մշակույթի հարցերով պատասխանատուների և Ռոմանի կոնսերվատորիայի ղեկավարության հետ:*

2017 թ. հուլիսի 3-7-ը մեկնել էի Լիոն, Ռոման, Մարսել (Ֆրանսիա), ապա նաև Ժնև (Շվեյցարիա)՝ որպես պատվիրակության ղեկավար՝ մասնակցելու Ռոմանի կոնսերվատորիայի և Ֆրանսիա-Աշտարակ-Հայաստան ընկերության կողմից անցկացվող ամփոփիչ հայ-ֆրանսիական մանկական նվագախմբի ամառային ստուգատես-համերգներին, ինչպես նաև հանդիպումներ ունենալու Օվերն Ռոն Ալպ մարզի նախագահ Լորան Վոկեյի, Լիոնի և Ռոմանի քաղաքապետարանների մշակույթի հարցերով պատասխանատուների և Ռոմանի կոնսերվատորիայի ղեկավարության հետ՝ հետագա համագործակցության վերաբերյալ:

Պատվիրակության կազմում էին Երևանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի տնօրեն Մ. Կոստանդյանը, ՀՀ վաստակավոր արտիստ, դուդուկահար Գ. Դաբաղյանը:

Նվագախմբի համերգները մեկնարկել էին դեռևս հունիսի 30-ին Մարսելում և ավարտվեցին հուլիսի 9-ին Լիոնում: Հուլիսի 3-8-ը նվագախումբը համերգներով հանդես եկավ Վալանսում, Լիոնում, Ռոմանում և Ժնևում:

Համերգները կայացան Վալանսի Կոմեդի թատրոնում, Լիոնի Սեն Մարտին Դ'Էնայի բազիլիկ եկեղեցում, Ռոմանի և Ժնևի կոնսերվատորիաների համերգասրահներում: Համերգային ծրագրում հնչեցին հայ և ֆրանսիացի կոմպոզիտորների ստեղծագործություններ: Համերգներին աջակցում էր նաև Ֆրանսիայում գործող Հայ հուշագրության կենտրոնը (CNMA), Ռոն-Ալպի երկրամասի ղեկավարությունը:

Համերգների միջև ընկած ընդմիջումներին միասնական նվագախմբի սաները վարպետության դասեր անցան Ռոմանի և Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի անվանի դասախոսների՝ մասնավորապես Գևորգ Դաբաղյանի, Լևոն Չատիկյանի, Մարի Հորտեզ Լակրուայի, Տարոն Կարապետյանի մոտ:

Ամառային ստուգատես-համերգների պաշտոնական բացումը կայացավ հուլիսի 5-ին Վալանսում: Ողջույնի խոսքով այն բացեցինք Ռոմանի կոնսերվատորիայի ռեկտոր Մարի Հորտեզ Լակրուան և ես: Ողջունելով համերգի մասնակիցներին, կարևորեցի համատեղ նվագախմբի ստեղծումն ու այն առաքելությունը, որը կատարում է վերջինս հայկական ազգային գործիքը՝ դուդուկը, օտարազգի հանդիսատեսին ներկայացնելու, ինպես նաև հայ երաժշտարվեստը հանրահռչակելու ուղղությամբ: Միաժամանակ ընդգծեցի, որ նախարարությունը անչափ կարևորում է ստեղծված համագործակցությունը և կշարունակի աջակցել նվագախմբի ծրագրերին: Կարևորեցի նաև ամենամյա ամփոփիչ ամառային ստուգատեսների անցկացումը, որոնք ավանդաբար և հաջորդականությամբ անց են կացվում Հայաստանում և Ֆրանսիայում: Խոսքս եզրափակեցի, Ռոմանի կոնսերվատորիայի դասախոս, թավջութակահար Տարոն Կարապետյանին ՀՀ մշակույթի նախարարության «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալով պարգևատրելու արարողությամբ:

Համերգին ներկա է գտնվել նաև Բուդ-լե-Վալանսի քաղաքապետարանի տարածաշրջանային մշակութային խորհրդի նախագահ Մառլեն Մուղիյեն:

Գործուղման ընթացքում հանդիպում ունեցա Ռոմանի կոնսերվատորիայի ռեկտոր Մարի Հորտեզ Լակրուայի հետ. քննարկեցինք երկկողմ համագործակցությունն էլ

ավելի ակտիվացնելու հարցերը, ինչպես նաև Ռոմանի կոնսերվատորիայում քանոնի դասարան բացելու հնարավորությունը: Անդրադարձանք նաև համատեղ նվագախմբի հաջորդ 2 տարվա ծրագրերին և 2018 թ. Հայաստանում կայանալիք ամառային ճամբար-սրուգատեսին:

Նույն օրը հանդիպեցի նաև Ֆրանսիա-Աշտարակ-Հայաստան ընկերության նախագահ Լևոն Չատիկյանին, ում հետ քննարկեցինք մանկական նվագախմբի հետագա ծրագրերը: Շնորհակալություն հայտնելով վերջինիս Ֆրանսիայում հայ մշակույթն ու երաժշտարվեստը հանրահռչակելու համար՝ մեկ անգամ ևս հաստատեցի նախարարության պատրաստակամությունը անհրաժեշտ աջակցություն, այդ թվում նաև մեթոդաբանական, ցուցաբերել Ռոմանի կոնսերվատորիայի դուդուկի դասարանին:

Ռոմանի քաղաքապետարանի մշակույթի բաժնի պատասխանատուների հետ քննարկեցինք մշակույթի տարբեր բնագավառներում հնարավոր համագործակցության հարցերը:

Հուլիսի 7-ին Ռոմանի կոնսերվատորիայի դահլիճում կայացած համերգից հետո հանդիպեցի Օվերն Ռոն Ալպ մարզի նախագահ Լորան Վոկեյին, ում հետ քննարկեցին Հայաստան-Ֆրանսիա ապակենտրոնացման ծրագրի շրջանակներում ՀՀ մշակույթի նախարարության և նշյալ մարզի հետ մոտակա 2 տարվա համագործակցության հնարավորությունները, մասնավորապես 2019 թ. Ռոն Ալպում, Լիոնում, Մարսելում և Ռոմանում Կոմիտասին նվիրված հոբելյանական համատեղ համերգ-միջոցառումներ կազմակերպելու հարցը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ կմշակվի միջոցառումների նախագիծը և ժամանակացույցը, որը հետագայում կհամաձայնեցվի կողմերի միջև:

Պարոն Վոկեն նշեց, որ նույնպես անչափ կարևորում է ստեղծված համագործակցությունը և պատրաստ է աջակցել այլ ոլորտներում ևս համատեղ մշակութային ծրագրերի իրականացմանը:

Հանդիպման ավարտին Օվերն Ռոն Ալպ մարզի նախագահ Լորան Վոկեյին հանձնեցի Հայաստանը և հայ մշակույթը ներկայացնող ալբոմային գրականություն և հուշանվեր:

Լիոնի և Մարսելի քաղաքապետարանների մշակույթի պատասխանատուների հետ նույնպես քննարկվեց 2019 թ. Կոմիտասին նվիրված հոբելյանական համատեղ համերգ կազմակերպելու հարցը: Առաջարկեցի համերգներն ուղեկցել դասախոսություններով և Երևանի Կոմիտասի թանգարանում պահվող ցուցանմուշների կրկնօրինակների ցուցադրությամբ: Բացի այդ, Լիոնի կոնսերվատորիայի ռեկտոր Ալեն Ժակոյի հետ քննարկեցինք Լիոնի և Երևանի կոնսերվատորիաների միջև համագործակցություն ծավալելու հարցը: Այդ նպատակով պարոն Ժակոն 2018 թվականի սկզբին կժամանի Հայաստան:

Հուլիսի 7-ին համատեղ նվագախումբը ելույթ ունեցավ Ռոմանում, իսկ հուլիսի 8-ին՝ Ժնևում:

Գործուղման ընթացքում հարցազրույց եմ տվել ռադիո A-ին, որտեղ խոսել եմ հայ-ֆրանսիական մշակութային համագործակցության մասին: Հարցազրույցին մասնակցում էր նաև Ռոմանի կոնսերվատորիայի ռեկտորը:

Այցիս ընթացքում ծանոթացա նաև Ռոն Ալպի՝ Վալանսի, Լիոնի, Ռոմանի մշակութային հաստատությունների աշխատանքին, այցելեցի Հայ հուշագրության կենտրոն:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. **Կայացան հայ-ֆրանսիական մանկական նվագախմբի ամառային ամփոփիչ համերգ-ստուգատեսները:**
2. **Օվերն Ռոն Ալպ մարզի, Լիոնի և Մարսելի քաղաքապետարանների հետ քննարկվեցին 2018-2019 թթ. մշակութային համագործակցության ուղղություններն ու ծրագրերը:**
3. **Պայմանավորվածություն ձեռք բերվեց 2019 թ. Օվերն Ռոն Ալպ մարզում, Լիոնում և Մարսելում կազմակերպել Մեծն Կոմիտասին նվիրված հոբելյանական ծրագիր (համերգ, դասախոսություն, ցուցահանդես):**
4. **Ռոմանի կոնսերվատորիայի ղեկավարության հետ նախանշվեցին հաջորդ տարվա հայաստանյան ամառային համերգ-ստուգատեսի և վարպետության դասերի ժամկետներն ու ծրագիրը:**

5. **Ռոմանի կոնսերվատորիայի դասախոս, թավջութակահար Տարոն Կարապետյանին հանձնեցի «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալը:**
6. **Ծանոթացա Ռոն Ալպի՝ Վալանսի, Լիոնի, Ռոմանի մշակութային հաստատությունների աշխատանքին:**
7. **Պայմանավորվածություն ձեռքբերվեց համագործակցություն սկսել Լիոնի և Երևանի կոնսերվատորիաների միջև: Այդ նպատակով պարոն Ժակոն 2018 թվականի սկզբին կժամանի հայաստան:**
8. **Կոմպոզիտոր Ֆիլիպ Ռեգանան երաժշտական ստեղծագործություն կգրի հայ-ֆրանսիական համատեղ նվագախմբի համար, որը կկատարվի հաջորդ տարի Երևանում:**

ՀՀ մշակույթի նախարարության
աշխատակազմի ղեկավար՝ Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ